ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—o—

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Հայոց Ազգագրական Ընկերութիւնը հայ գրերի և տպագրութեան յօբելեանը տօնում է այսպէս.

1) Մասնակցում է էջմիածնի յօբելեանական հանդէսներին՝ ուղարկելով ներկայացուցիչներ։

2) Կազմում է հայկական հրատարակութիւնների ցուցահանդէս մաս-մաս։ Այս տօներին ցուցադրում է ռուսահայ ամբողջ պարբերական մամուլը և ազգագրական բոլոր հայերէն հրատարակութիւնները. այս առիթով արդէն կազմված է բոլոր նշանաւոր յօդուածների գրախօսութիւնը։ Միաժամանակ ցուցադրվում է ռուսահայ բոլոր խմբագիրների խմբանկարը։

3) Տեղի կունենան հետևեալ դասախօսութիւնները.

ա) Գրի և տպագրութեան կատարած դերը հայերիս մէջ. դասախօսելու է Ե. Լալայեանը։

բ) Հայ գրերի զարգացումը. դասախօսելու է Գարեգին վ. Յովսէփեանը։

գ) Հայ պարբերական մամուլը. դասախօսելու է Մ. Մատէնճեանը։

դ) Հայ ազգագրութիւնը. դասախօսելու է Խ. Սամուէլեանը։